

Գայանե Եղիազարյան

ԵՊԼՀ

ԿՆՈՋ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ (Է. ԳԻԼԲԵՐԹԻ «ՈՒՏԵԼ, ԱՂՈԹԵԼ, ՍԻՐԵԼ» ՎԵՊԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Սույն հոդվածում վերլուծվում է ազատություն հասկացությունը ամերիկյան գեղարվեստական խոսույթում և ամերիկյան մշակութային ինքնության համատեքստում: Ներկայացվում են համընդհանուր արժեքային այս կողմնորոշիչի հասկացական դրսևորումները, մասնավորապես կնոջ ազատության ընկալումների առանձնահատկությունները Է. Գիլբերթի «Ուտել, աղոթել, սիրել» վեպում և դրա հայերեն թարգմանության մեջ:

Հիմնաբառեր. *Էլիզաբեթ Գիլբերթ, գրական խոսույթ, ազատություն, կին, թարգմանական հնարներ:*

Ազատությունը վայելելու համար մենք պետք է կառավարենք ինքներս մեզ:

Վիրջինիա Վուլֆ

Ժամանակակից գրականագիտությունն այսօր կարևորում է գրական վերլուծությունների մարդակենտրոն

հայեցակերպը գեղարվեստական տեքստի հեղինակի աշխարհայացքային, գեղագիտական և արժեքանական կողմնորոշումների հարաշարժ համադրության համատեքստում, երբ անդրադարձ կա տվյալ հանրույթի մշակույթին և արժեհամակարգին: Սույն հոդվածում վերլուծելու ենք **ազատություն**, մասնավորապես կնոջ ազատության գաղափարի առկայացումը գեղարվեստական խոսույթում 21-րդ դարի ամերիկացի կին գրող Էլիզաբեթ Գիլբերթի «Ուտել, ադոթել, սիրել» վեպի հիման վրա: Լինելով համընդհանուր կողմնորոշիչներից մեկը տարբեր մշակույթներում՝ **ազատություն** հասկացությւթը, այդուհանդերձ, ներկայանում է արժեքային և հասկացական տարբեր ընկալումներով, և դրանց գեղարվեստական իրացումներն առավել խորությամբ դիտարկելու համար հարկ է ներկայացնել ազատության տարբեր՝ փիլիսոփայական, հոգեբանական, իրավաբաղաքական դիտանկյունները:

Թերևս փիլիսոփայական աշխարհընկալման կամ մարդկային կյանքի բնական ընթացքի համար չկա առավել կարևոր երևույթ, քան **ազատություն** հասկացությունը: **Ազատությունը** փիլիսոփայության առանցքային խնդիրն է, ցանկացած փիլիսոփայական հասուն համակարգի գագաթնակետը և սոցիալական առաջընթացի իրական չափանիշը: Հանուն ազատության հաղթանակի, հասարակության, մարդու ազատության, ինքնարտահայտման և ստեղծագործելու ազատության մարդիկ դիմակայել են շատ դժվարությունների և զրկանքների:

Ընդգծելով **ազատություն** հասկացության բարդությունը՝ Հեգելը գրել է. «Ոչ մի այլ գաղափար հնարավոր չէ լիարժեք համոզվածությամբ հայտարարել որպես այնքան բարդ և աղոտ երևույթ, ինչպիսին **ազատության** գաղափարն է, և ոչ մի գաղափարի քննարկումներում առկա չեն այդքան թյուր և հակասական ընկալումներ»:

Հոգեբանները սահմանում են **ազատությունը** որպես միևնույն իրավիճակում առկա բազմաթիվ հնարավորություններից մեկը ընտրելու և դրանով կառավարվելու ունակություն: Այլ բառերով՝ մարդու ազատությունը ենթադրում է պահվածքի կոնկրետ տեսակի ընտրություն: Սակայն դարեր շարունակ տրվել է նաև հետևյալ հարցը. արդյո՞ք մարդը միշտ ազատ է իր գործողություններում, թե՞ նա ուղղորդվում է իր հսկողությունից վեր այլ ուժերի կողմից, որոնք կարող են հակառակ լինել իր կամքին: Այստեղ առաջ է գալիս նախախնամության և ճակատագրի խնդիրը, ինչպես նաև բնական, հասարակական և այլ երևույթներից մարդու կախվածության հարցը: Ըստ Կանտի՝ իրադարձությունները անկախ կերպով նախաձեռնելու մարդու ունակությունը հենց նրա ազատությունն է: Ըստ Սպինոզայի՝ մենք ազատ ենք այնքանով, որ կարող ենք կոնկրետ իրավիճակում գործել՝ համաձայն մեր խղճի և դատողության: Ըստ հոգեբան Վ. Գլասերի՝ «**Ազատությունը** ընտրության հնարավորությունն է»:

Քաղաքական տեսանկյունից **ազատություն** հասկացությամբ սկսվում է ինքնակառավարման (որը հայտնի է նաև

որպես ինքնատիրապետում) սկզբունքից: Ազատ հասարակությունում յուրաքանչյուր մարդ ունի սեփական մարմնի և հոգու իրավական կառավարման կամ տիրապետման իրավունք և ազատություն:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված են մարդու **ազատությանը** վերաբերող բազմաթիվ հոդվածներ՝ *բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ արժանապատվության և իրավունքների առումով, յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատություն և այլն:*

Ամփոփելով այս հաստատվածը, նշենք, որ **ազատությունը** մարդկային գոյության հիմնարար կերպն է, սակայն ոչ ոք չի կարող ապրել հասարակությունում և ազատ լինել հասարակությունից: Չկան հասարակությունից լիովին մեկուսացած մարդիկ. մարդը պարտավոր է համապատասխանեցնել իր վարքը, գործողությունները և ցանկությունները հասարակությունում ընդունված նորմերին, որոնք էլ որոշարկվում են պատմական, մշակութային, սոցիալական, քաղաքական, բարոյական, իրավական և այլ գործոնների ազդեցությամբ: Եվ այս ամենի իմացությունն է մարդուն դարձնում ներքուստ ազատ: Այսպիսով, **ազատություն** հասկացույթը սերտորեն կապված է գիտակցության և գիտելիքի հետ, և ինչպես Ֆ. Ռուզվելտն է նշել 1936թ. իր ելույթում՝ «միայն կրթված մարդիկ են ազատ»: Այսպիսով, ազատությունը մարդու ունակությունն է՝ հիմնված գիտելի-

քի և ըստ անհրաժեշտության գործելու ընտրության վրա: Ազատությունը հավելյալ պարտականություն է, դժվարին ուղի, որ մարդը պետք է միայնակ անցնի և մենակ պատասխան տա իր խղճի և մարդկության առջև: Ըստ Ա, Քամյուի՝ «Ամեն ազատության ավարտին կա հատուցում, և ահա թե ինչու ազատությունը դժվար է հանդուրժել»:

ԱՄՆ-ը այն երկրներից է, որի պատմությունը և մշակույթը սերտորեն կապված են **ազատության** գաղափարի հետ: Այս երկիրը զարգացել է Բրիտանական միապետությունից ազատագրման արդյունքում, և լիովին գիտակցելով, թե ինչ է նշանակում լծի և սահմանափակումների պարագայում ապրելը՝ Ամերիկյան իր ողջ փիլիսոփայությունը կառուցել է ազատության և երջանկության հասնելու բարձրագույն գաղափարի վրա: Այսօր էլ ամերիկյան մշակույթի երկու կարևորագույն հասկացություններն են՝ մարդու ազատությունը և այլոց ընտրության ու կարծիքի հանդեպ հարգանքը: Այն հարցին, թե ամերիկացիները ամենաշատը ինչն են գնահատում իրենց երկրում, օրինակ, ըստ Գեյլափ Փոլի 2012թ. դեկտեմբերին անցկացված հարցումների՝ ամերիկացիների 77%-ի պատասխանն է՝ անձնական ազատությունը:

Ամերիկացիների կարծիքով **ազատությունն** այն է, ինչը թույլ է տալիս մյուս մարդկանց հետ ապրել ներդաշնակության մեջ առանց նրանց կյանքին խառնվելու: Դա մարդու անձնական պատասխանատվությունն է ինքնուրույն հոգալու իր հոգսերը: Իսկական ամերիկյան երա-

զանքն այն է, երբ ոչ ոք չի թելադրում և չի պարտադրում ապրելու կերպը, և յուրաքանչյուրն ապրում է այնպես, ինչպես ցանկանում է: Եվ ԱՄՆ-ը այն եզակի երկրներից է, որտեղ առկա են ազատությանը նվիրված ամենաշատ խորհրդանիշերն ու հուշարձանները՝ Ազատության զանգ, Անկախության դեկլարացիա, և, իհարկե, Ազատության արձան: Բազմաթիվ և բազմազան ենթամշակույթներով հարուստ այս երկրում ազատ ապրելու հայեցակերպը կարող է տարբեր կերպ ընկալվել տարբեր մարդկանց կողմից, և եթե դա չի խանգարում այլոց և չի խաթարում օրենքը, ապա միանգամայն ընդունելի է:

Բնական է նաև, որ ազատության ընկալումները որոշակիորեն տարբերվում են ոչ միայն տարբեր մշակույթներում, այլև տարբեր գրականություններում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **ազատության**, մասնավորապես կնոջ ազատության գաղափարի գեղարվեստական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Փորձենք վերլուծել այս չափազանց տարողունակ և արժեքավոր երևույթի գեղարվեստական առկայացումները 21-րդ դարի ամերակացի կին գրող **Էլիզաբեթ Գիլբերթի «Ուտել, աղոթել, սիրել»** ինքնակենսագրական վեպում: Մա հեղինակի պատմությունն է, որը 30 տարին լրանալուն պես վերապրում է միջին տարիքի ճգնաժամը: Նա ուներ այն ամենն, ինչ կարող էր ցանկանալ կրթված, փառատենչ և նպատակասլաց ամերիկուհին՝ ամուսին, տուն, հաջողակ կարիերա: Սակայն երջանիկ

զգալու փոխարեն նա դատարկություն և շփոթմունք է զգում: Մա զգայական մտքի, ինքնափնտրտուքների, զգացմունքային տարուբերումների և մշակութային ինքնության դրսևորման, ինչպես նաև **ազատություն** գաղափարի ամենատարբեր ընկալումների հարթակ է: Ամերիկացի կինը սպասում էր ամուսնությունից իր ազատ լինելուն, սակայն միևնույն ժամանակ, անորոշության մեջ էր, քանի որ սպասում էր ամուսանական պայմանագրի հետ կապված իրեն առաջարկվող պայմաններին: Ամերիկուհին ազատ էր, քանի որ նրա ազատությունն ամրագրված է ամերիկյան արժեհամակարգում, սակայն միևնույն ժամանակ նա անազատ էր, քանի որ ամուսնության, սպա ամուսնալուծության կապանքները խանգարում էին նրան վայելել իր բնական ազատությունը.

*Months passed. My life hung in limbo as I **waited to be released**, waited to see what the terms would be. We were living separately (he has moved into our Manhattan apartment), but nothing was resolved. (p.21)*

*Անցան ամիսներ: Անորոշության մեջ էի, երբ սպասում էի **իմ ազատ լինելուն**, սպասում էի տեսնելու, թե ինչ պայմաններ էին ինձ առաջարկելու: Մենք առանձին էինք ապրում, (նա տեղափոխվել էր մեր Մանհեթենի բնակարան), սակայն ոչինչ էլ դեռ լուծված չէր:*

Նա ազատ է, սակայն միայնակ, իսկ նա «մահու չափ վախենում է միայնակ մնալուց».

*So miss him. Send him some love and light every time you think about him, and then drop it. You're just afraid to let go of the last bits of David because then **you'll really be alone, and Liz Gilbert is scared to death of what will happen if she's really alone.** (p.199)*

*Կարող ես շարունակել կարոտել նրան: Ամեն անգամ, երբ նրա մասին մտածես, սեր և ջերմություն ուղարկիր նրան, իսկ հետո բաց թող այդ մտքերը: Դու պարզապես վախենում ես խզել Դեյվիդի հետ ունեցած քո վերջին կապը, քանի որ այդ ժամանակ **դու իսկապես միայնակ կլինես, իսկ Լիզ Գիլբերթը մահու չափ վախենում է իսկապես միայնակ մնալուց:***

Երբ դեռ չէր ամուսնալուծվել, նա իրեն ազատ չէր համարում, սակայն իսկական ազատությունը գուցե հենց ընտանիք ունենալն էր, սիրած մարդու հետ համատեղ կյանքը, սիրո վայելքներին ազատորեն տրվելը, ավելին՝ ընտանեկան այն «կապանքները», որոնք ճնշում և խանգարում էին նրան: Ձերբազատվելով այդ ճնշումից՝ նա կրկին ազատ չէ, քանի որ տառապում է և կառչում իր սիրո «վերջին մատույցներից»՝

I was hiding in the bathroom for something like the forty-seventh consecutive night, and – just as during all those nights before – I was sobbing. Sobbing so hard, in fact, that a great lake of tears and snot was spreading before me on the bathroom tiles, a veritable Lake Inferior (if you will) of all my shame and fear and confusion and grief. (p. 10-11)

Ես թաքնված էի լոգարանում՝ քառասունյոթերորդ իրար հաջորդող գիշերներից հետո, և բոլոր նախորդ գիշերների նման, այս անգամ էլ հեկեկում էի: Եվ այնքան դառն էի հեկեկում, որ իմ առջև արցունքի մեծ լիճ էր հոսում լոգարանի սալիկների վրա, իմ ամոթի, վախի, շփոթմունքի ու վշտի իսկական «գոջման» լիճը:

Չնայած ամսասանքի, ամոթի, վախի, շփոթմունքի ու վշտի իսկական «գոջման» փաստին և միայնակ ու լքված զգալու ծանր ապրումներին՝ վեպի հերոսուհին (հեղինակը) ազատ է և ամուսնալուծությունից անմիջապես հետո կարող է նոր սիրավեպ ունենալ: Թեպետ դա բնական է ամերիկյան ազատամիտ արժեքներով դաստիարակված կնոջ համար, սակայն նա կրկին անազատ է, որովհետև չի վայելում այդ ազատ սիրո բերկրանքը, սեր, որը նույնպես դառն ավարտ ունի՝

*These facts alone made him an unlikely romantic partner for me, given that I am a **professional American woman in my mid-thirties**, who has just come through a **failed***

marriage and a devastating, interminable divorce, followed immediately by a passionate love affair that ended in sickening heartbreak. (p. 7)

Միայն այս փաստերը նրան դարձնում են **անհավանական ռոմանտիկ զուգրնիկեր** ինձ համար, այն դեպքում, երբ ես երեսունն անց տիպիկ ամերիկացի կին եմ, ով ունեցել է **անհաջող ամուսնություն**՝ քայքայիչ և երկարատև ամուսնալուծության գործընթացով, որին էլ անմիջապես հաջորդել է մի կրքոտ սիրավեպ՝ դառնը ավարտով:

Կամ՝

*I clung to David for escape from marriage as if he were the last helicopter pulling out of Saigon. I inflicted upon him my every **hope for my salvation and happiness.** And, yes, I did love him.* (p. 22)

Ես կառչել էի Դեյվիդից ամուսնությունից փախչելու համար, կարծես թե նա Սայգոնից թռչող վերջին ուղղաթիռը լիներ: Կարծես թե նա լիներ իմ **փրկության և երջանկության միակ հույսը**: Այո, ես իսկապես սիրում էի նրան:

Ամերիկուհին չի խորշում իր տառապանքները մեղմացնելու համար մեկ տղամարդու անկողնուց մեկ այլ տղամարդու գիրկն ընկնել, քանի որ, ըստ նրա, դա անհարիր չէ իր տարիքի՝ 30 ամյակը բոլորած կնոջ բարոյական նորմերին.

Not to mention that I have finally arrived at that age where a woman starts to question whether the wisest way to get over the loss of one beautiful brown-eyed young man is indeed to promptly invite another one into her bed. . (p. 7)

Կարիք չկա նշելու, որ ես վերջապես հասել եմ այն տարիքին, երբ կինը սկսում է մտածել այն մասին՝ արդյոք խելացի կլինի մի գեղեցիկ շագանակագույն աչքերով տղամարդու կորուստը արագորեն լրացնել՝ մեկ այլ տղամարդու հետ անկողին մտնելով:

Եվ այսպես, հեղինակը վերապրել է ամուսնալուծություն, մեկ այլ բուռն սիրավեպ և ձախողված սեր, և իստացումն այն ամեն տառապանքի, որ, ըստ նրա, բաժին էր ընկել իրեն: Ապաքինվելու համար նա արմատական քայլ է կատարում՝ ազատվում է իր բոլոր իրերից, թողնում աշխատանքը և ձեռնարկում մեկամյա ճամփորդություն աշխարհով մեկ՝ մեն-մենակ:

Գրքում Էլիզաբեթ Գիլբերթի հուշագրություններն են, որ պատմում են նրա ճամփորդության մասին դեպի Իտալիա, Հնդկաստան և Ինդոնեզիա: Հինգ ամիս անցկացրել է Իտալիայում՝ շոռում ծանոթանալով հաճույքների արվեստին և վայելելով տեղի սնունդը («Ուտել»), չորս ամիս եղել է Հնդկաստանում՝ փնտրելով հոգևոր արժեքներ և սովորել նվիրումի արվեստը («Ադոթել»): Տարվա մնացյալ մասը անցկացրել է Ինդոնեզիայում՝ Բալի կղզում, որտեղ

կարողացել է գնահատել աշխարհիկ վայելքների և երկնային գերազանցության տարբերությունը, կարևորել հավասարակշռություն գտնելու ընթացքը, և, ի վերջո, գտել իր կյանքի սերը («Միրել»): Մակայն ճամփորդության ավարտին, թվում է, դեռ ինչ-որ բան պակասում է նրան:

Վեպում առկա տեսարաններն ավելի պատկերավոր և առարկայական են դարձնում հեղինակի կողմից հմտորեն ներկայացված դիպուկ նկարագրությունները: Պատկերի գեղարվեստականությանը նպաստում են նաև բարձր հուզական երանգավորում և գնահատողականություն արտահայտող մակդիրների ու փոխաբերությունների կիրառությունը, որոնց միջոցով հեղինակն արտացոլում է իր ապրումներն ու հույզերը՝ որքան էլ նա ազատ և անկախ, աշխատանքում կայացած ամերիկուհի է, այնուամենայնիվ, արտասվում է իր կորցրած սիրո և քայքայված ամուսնության համար: Ամերիկյան ազատ հասարակության համատեքստում չափազանց զարմանալի է, որ ամերիկացիներին նույնպես հատուկ է սնափառության զգացումը՝ այդ նույն հասարակության հավանությանն արժանանալու, աշխարհիկ պարզների, հաջողության, դիրքի և հարստության հասնելու մտայնությամբ:

Գիլբերթը ձգտում է ընթերցողի մոտ արթնացնել այն նույն զգացմունքերը, որ ինքն է տածում իր հերոսների և հասարակության նկատմամբ: Նա ուզում է ընդգծել այն հանգամանքը, որ հասարակության տարբեր անդամների վարքագծի դրսևորումները կարող են տարբեր լինել, սակայն արդյունքում բոլորն էլ ձգտում են միևնույն բանի՝

ազատության և, միննույն ժամանակ՝ երջանկության ու սիրո, որոնց համատեղումը, ցավոք, միշտ չէ, որ հնարավոր է:

Է. Գիլբերթի «Ուտել, աղոթել, սիրել» վեպին բնորոշ է երևույթների պատկերավոր նկարագրությունը, որոնք փոխանցելու և առավել շոշափելի դարձնելու համար հեղինակն ամբողջ վեպն առատորեն ողողել է ոճական հյութեղ միջոցներով՝ մակդիր */hot, powerful sadness /*, փոխաբերություն */My thoughts keep flying back to my failed marriage, and to all the attendant shame and anger of that event./*, չափազանցություն */This loss upon loss has left me feeling sad and brittle and about seven thousand years old ./*, անձնավորում */but my mind stares at me with steely power and says, "I will never let you pass me by./* և այլն: Պատկերավորման միջոցները այն կարևոր հնարներն են, որով ստեղծագործողը հասնում է պատկերի առավել կոնկրետության, տեսանելիության, խոսքի գեղագիտական հնչեղության, իր վերաբերմունքն ու խոսքն ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է դարձնում:

Վեպում առկա արտահայտչամիջոցների կիրառությունը պայմանավորված է հեղինակի՝ հասարակության, դրա անդամների և նրանց միջև փոխհարաբերությունների անհատական և յուրովի ընկալմամբ, և դրանք աչքի են ընկնում այն առանձնահատկությամբ, որը կարելի է անվանել անսպասելիություն, երբ տվյալ կառույցն օգտագործվում է անսովոր խոսքաշարում՝ ուժեղացնելով խոսքի ներգործության ուժը:

Հարկ է նշել նաև, որ վեպի թարգմանության ընթացքում կարող են տեղի ունենալ մի շարք տեղաշարժեր՝

թարգմանական այս կամ այն հնարի ներմուծում, օրինակ՝ բառային զեղչում /*All I can do is press the heels of my palms against my eyes, trying to push the tears back in. - Ամենք, ինչ կարող եմ անել՝ ափերս աչքերիս սեղմելն է՝ փորձելով ետ մղել արցունքներս:* (p.114)/, բառային հավելում /*To travel is worth any cost or sacrifice. - Հանուն ճամփորդության տրված ցանկացած գին կամ արված զոհաբերություն արդարացված է:* (p.53)/, վերապատում /*Is this lifetime supposed to be only about duty? - Արդյո՞ք կյանքը մարդուն տրված է միայն պարտականություններ կատարելու համար:* (p.29)/, իմաստային տեղաշարժ /*Sometimes the best way to get over someone is to get under someone else. - Երբեմն մեկից ազատվելու լավագույն միջոցը մեկ ուրիշի հետ լինելն է:* (p.251)/, քերականական կառուցվածքի փոփոխություն կամ խոսքիմասային փոխակերպում /*It was my most sincere belief when I left my husband that we could settle our practical affairs in a few hours with a calculator. - Ամուսնուս լքելուց հետո ես անկեղծորեն հավատում էի, որ մեր գործնական խնդիրները կլուծվեն մեկ ժամում՝ հաշվիչի օգնությամբ:* (p.21)/ և այլ հնարներ, որոնք էլ միտված են ապահովելու համատեքստային իմաստը և աղբյուր ու թիրախ լեզուների միջև միջմշակութային ներդաշնակ հաղորդակցությունը:

Բիարկե, անհնար է մեկ հոդվածի սահմաններում որոշարկել այնպիսի առանցքային և կարևոր հասկացության, ինչպիսին ազատությունն է՝ թեկուզ միայն գեղար-

վեստական առկայացման առանձնահատկությունները: Ուստի, ավարտելով մեջբերենք Բերնարդ Շոուի խոսքերը՝ «Ազատություն նշանակում է պատասխանատվություն, այդ պատճառով շատերն են վախենում դրանից»:

Գրականության ցանկ

1. Եղիազարյան, Գ. (2015) *Ազատության ընկալումները ամերիկյան, բրիտանական և հայ լեզվամտածողության համատեքստում*: Աշխարհի լեզվական պատկերը. Ֆրակոֆոնիայի շրջանակներում կազմակերպված 6-րդ և 7-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, Լինգվա, էջ 64-73:
2. Camus, A. (1956) *La Chute*, Gallimard, Paris, p. 154.
3. Gilbert, E. (2006) *Eat, Pray, Love*, Penguin Books Ltd, London, 445p.
4. Hegel (1845) *Die Philosophie des Geistes in: Werke*, Siebenter Band, Berlin, p. 374.
5. Hughes, S. (2007) *What Freedom Means to Me*, available online at: <http://onlinephilosophyclub.com>
6. Glasser, W. (2010) *Choice Theory*, available online at: <http://www.wglasser.com>
7. The Universal Declaration of Human Rights, www.un.org/en/documents/udhr
8. <http://www.gallup.com/poll/159716/americans-consider-individual-freedoms-nation-top-virtue.aspx>

GAYANE YEGHIAZARYAN-Perceptions of Freedom of Woman in American Literary Discourse /on the material of the novel “Eat, Pray, Love” by E. Gilbert/ - The paper aims at revealing the conceptual and value constituents of the concept freedom in American literary discourse, namely in the novel “Eat, Pray, Love” by Elizabeth Gilbert. The peculiarities of the perception of the universal value “freedom” by an American woman and their transference into Armenian are represented in the light of American values and beliefs.

Key words: Elizabeth Gilbert, literary discourse, freedom, woman, translation tools.

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН- Особенности восприятия свободы женщины в американском художественном дискурсе /на материале романа «ЕСТЬ, МОЛИТЬСЯ, ЛЮБИТЬ» Э. Гилберт/ - В статье рассматривается понятие свобода, в частности, женская свобода, в американском художественном дискурсе. В контексте американской культурной идентичности и когниции выделяются концептуальные и ценностные ориентиры, стилистические приемы актуализации понятия «свобода» а также способы их адекватной трансференции на армянский язык.

Ключевые слова: Элизабет Гилберт, художественный дискурс, свобода, женщина, приемы перевода.